Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-245-27.04.2022,01.06.2022-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 118-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) առաջին նախադասությունում «հաշմանդամության կարգի որոշումը» բառերը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելը» բառերով:

2) 2-րդ նախադասությունը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ.՝ «Աշխատողի աշխատունակությունը չվերականգնվելու և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում գործատուն սույն գլխով նախատեսված հիմքերով կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը, եթե առկա է հակացուցման մասին լիազոր մարմնի կողմից տրված համապատասխան եզրակացություն՝ տվյալ աշխատանքով զբաղվելու վերաբերյալ:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությամբ. «Հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելուց հետո աշխատողն իր աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման կամ նույն գործատուի մոտ այլ աշխատանքի անցնելու նպատակով կարող է դիմել գործատուին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խելամիտ հարմարեցումներ ստանալու նպատակով:»:

Հոդված 2.

Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «հաշմանդամի» բառը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձի» բառերով:

Հոդված 3.

Օրենսգրքի 144-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունում «Հաշմանդամները» բառը փոխարինել «Հաշմանդամություն ունեցող անձինք» բառերով:

Հոդված 4.

Օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «հաշմանդամ» բառը փոխարինել «հաշմանդամություն ունեցող» բառով:

Հոդված 5.

Օրենսգրքի 244-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին կետով. «5.1) հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումներ տրամադրելը:»:

Հոդված 6.

Օրենսգրքի 245-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությամբ. «Հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղի մատչելիության ապահովումը (աշխատավայրում խելամիտ հարմարեցումներ տրամադրելը) երաշխավորվում է օրենքներով:»:

Հոդված 7.

Օրենսգրքի 250-րդ հոդվածի 5-րդ մասի «տեղահանման պլան» բառերից հետո լրացնել «, որոնք պետք է կազմվեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները հաշվի առնելով» բառերը:

Հոդված 8.

Օրենսգրքի 259-րդ հոդվածի վերնագրում և տեքստում «հաշմանդամների» բառերը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձանց» բառերով:

Հոդված 9.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Սույն օրենքի 7-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ին:

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**

Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-245-27.04.2022,01.06.2022-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի ~~Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի Աշխատանքային օրենսգրքի~~ (այսուհետ՝ Օրենսգիրք) 118-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) առաջին նախադասությունում «հաշմանդամության կարգի որոշումը» բառերը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելը» բառերով:

2) 2-րդ նախադասությունը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ.՝ «Աշխատողի աշխատունակությունը չվերականգնվելու և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու

դեպքում գործատուն սույն գլխով նախատեսված հիմքերով կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը, եթե առկա է հակացուցման մասին լիազոր մարմնի կողմից տրված համապատասխան եզրակացություն՝ տվյալ աշխատանքով զբաղվելու վերաբերյալ:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությամբ. «Հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելուց հետո աշխատողն իր աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման կամ նույն գործատուի մոտ այլ աշխատանքի անցնելու նպատակով կարող է դիմել գործատուին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խելամիտ հարմարեցումներ ստանալու նպատակով:»:

Հոդված 2.

Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «հաշմանդամի» բառը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձի» բառերով:

Հոդված 3.

Օրենսգրքի 144-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունում «Հաշմանդամները» բառը փոխարինել «Հաշմանդամություն ունեցող անձինք» բառերով:

Հոդված 4.

Օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «հաշմանդամ» բառը փոխարինել «հաշմանդամություն ունեցող» բառով:

Հոդված 5.

Օրենսգրքի 244-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին կետով. ~~Օրենսգրքի 244-րդ հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ նախադասությամբ.՝~~ «~~7~~5.1) հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումներ տրամադրելը:»:

Հոդված 6.

Օրենսգրքի 245-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությամբ. «Հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղի

մատչելիության ապահովումը (աշխատավայրում խելամիտ հարմարեցումներ տրամադրելը) երաշխավորվում է օրենքներով:»:

Հոդված 7.

Օրենսգրքի 250-րդ հոդվածի 5-րդ մասի «տեղահանման պլան» բառերից հետո լրացնել «, որոնք պետք է կազմվեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները հաշվի առնելով» բառերը:

Հոդված 8.

Օրենսգրքի 259-րդ հոդվածի վերնագրում և տեքստում «հաշմանդամների» բառերը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձանց» բառերով:

Հոդված 9.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Սույն օրենքի 7-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ին:

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-245-27.04.2022,01.06.2022-ԱՍ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկվում է Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի Աշխատանքային օրենսգրքի բառերը փոխարինել 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով Աշխատանքային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 118-րդ հոդվածի 1-ին մասում ՝ 2) 2-րդ նախադասությունը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ.՝ «Աշխատողի աշխատունակությունը չվերականգնվելու և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում գործատուն սույն գլխով նախատեսված հիմքերով կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը, եթե առկա է		Ընդունվել է:

			հակացուցման մասին լիազոր մարմնի կողմից տրված համապատասխան եզրակացություն՝ տվյալ աշխատանքով զբաղվելու վերաբերյալ:»: Ըստ այդմ նախագծի 1-ին հոդվածի 2-րդ նախադասությունը համարակալվել է որպես 3-րդ՝ 3) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությամբ. «Հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելուց հետո աշխատողն իր աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման կամ նույն գործատուի մոտ այլ աշխատանքի անցնելու նպատակով կարող է դիմել գործատուին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խելամիտ հարմարեցումներ ստանալու նպատակով:»:		
3.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 5. Օրենսգրքի 244-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին կետով. «5.1) հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումներ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			տրամադրելը:»:		
4.	Հեղինակ	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածում «օրը:» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությամբ. «Սույն օրենքի 7-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ին:»:		Ընդունվել է:

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**